ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք, ՀՀ, Սյունիքի մարզ,
գ. Տեղ 35/2, Հեռ. 0284-96-2-20, tegh.syuniq@mta.gov.am

N 01-296
20 մայիս 2022թ.

<<ՁԵՌԱԿԵՐՏ>> ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ
ԽԻԿԱՐ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Տեղ համայնքի կարիքների համար կազմակերպված «Տեղ համայնքի Քարաշեն բնակավայրի վարչական շենքի առաջին հարկի մասնակի վերանորոգման աշխատանքների» ձեռքբերման «ՍՄՏՀ-ԳՀ-ԱՇՁԲ-21/10-4» ծածկագրով մրցույթի մասով Ձեր կազմակերպությունը՝ «Ձեռակերտ» ՍՊԸ-ն, ճանաչվել է ընտրված մասնակից և «09» նոյեմբերի 2021թ. կնքվել է պայմանագիր: Հիմք ընդունելով Ձեր դիմումը, պայմանագրի ժամկետի երկարացման հետ կապված, «25» դեկտեմբերի 2021թ. կնքվել է համաձայնագիր, որով պայմանագրի ժամկետը երկարացվել է մինչև «25» ապրիլի 2022թ., սակայն Պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված աշխատանքների մի մասը մնացել են անակատար:

Վերը նշված խախտումների շտկման համար ընկերությանը տրվել է ողջամիտ ժամկետ՝ 3 օր, սակայն առկա խնդիրների շտկման ուղղությամբ որևէ աշխատանք չի իրականացվել:

Հաշվի առնելով վերոգրյալը Տեղի համայնքապետարանը հարկադրված է 2022թ. մայիսի 20-ից «09» նոյեմբերի 2021թ կնքված պայմանագիրը և դրա անբաժանելի մաս հանդիսացող «25» դեկտեմբերի 2021թ. համաձայնագիրը միակողմանի լուծել: Միաժամանակ հայտնում ենք, որ կապալառուից կգանձվի որակավորման և պայմանագրի ապահովումներ, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ կետի ա) ենթակետի համաձայն Ձեր կազմակերպության համապատասխան հիմքերով պարտավորվում ենք ներկայացնել լիազոր մարմին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դավիթ Ղուլունց

Կատ. Համայնքի ղեկավարի տեղակալ՝ Ա. Միրզոյան

Հեռ. 098-551-097